№ 187 Հոկտեմբերի 24 (Նոյեմբերի 5) 1880 Հոկտեմբերի 24 (Նոյեմբերի 5) № 187

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցչական ժողովներ:—Ներքին տեսութիւն: Նամակ Շամախուց: Նամակ Ղարսից: Նամակ Խմբագրին:—Արտաքին տեսութիւն: «Դօլօս» լրագրի թղթակցութիւնը: Քուրդերը: Անգլիա: Նամակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

III

Մենք առաջարկում ենք այն անձինքներին, որոնք պէտք է հաւաքեն ընդհանուր ուսուցչական ժողովներ և որոնց պարագլուխն է Վրաստանի և Իմերէթի հայոց ուսումնարանների թեմական տեսուչը հետևեալը:

Թող ամեն մի ուսուցիչ գրաւոր կերպիւ յայտնէ այն, ինչ նա ասելու ունի իր առարկայի մասին, թող ամեն մի ուսումնարանի վարչութիւնը նոյնպէս նրկարագրէ իր ուսումնարանի կազմակերպութիւնը, աշակերտների և աշակերտուհիների քանակութիւնը, դասատների թիւը, այն հակառողջապահական պայմանները, որ նա նկատում է ուսումնարանի մէջ, իր կարծիքները և այլն, և այլն, մի խօսքով, ի՞նչ դրութեան մէջն է ուսումնարանը և ի՞նչ ցանկալի է և կարելի է անել նրան բարւոքելու համար:

Այսպէս մի կողմից ուսուցիչները կը ցոյց տան թէ ինչ պրոգրամայով են անցնում առարկան, իսկ իրանք ինչ պրոգրամայով կը ցանկանային անցնել և ի՞նչու, ինչ դասագրքեր են գործածվում մեր ուսումնարաններում, միւս կողմից ուսումնարանների վարչութիւնները կը ծանօթացնեն թէ իրանց ուսումնարանների հետ և թէ նրանց պահանջների հետ:

Այդպէս հաւաքված տեղեկութիւնները, որոնք կարող են հեշտութեամբ հաւաքվել մինչև փետրվար ամիս, կարելի է ամեն առարկային վերաբերեալ առանձին առանձին բուրբիկայի տակ տեղաւորել, փետրվարին և մարտին տպագրել և բաժանել մեր ուսուցիչներին:

Դրանով ամեն մի ուսուցչին միջոց կը տրվի ծանօթանալ իր ընկերակիցների դասաւորութեան եղանակի հետ, նրանց կարծիքների հետ, նա երկու-երեք ամիս ժամանակ կունենայ խելքը գլուխը հաւաքելու և կշռելու իր ընկերակիցների հայեացքները: Հատ նոր միտք, նոր հայեացք կարող է ծնվել նրա գլխում: Նա կը գայ ընդհանուր ժողովին, գիտենալով ինչ պէտք է խօսվի. նա արդէն պատրաստվել է վիճելու համար. նա կարող է իր ընկերակիցների մի քանի հայացքները միանգամից ջարդ ու փշուր անել: Այդպէս ուսուցչական ժողովները կազատվեն բոլոր ուսուցիչների հայեացքների մի առ մի լսելուց, որը, եթէ մինչև անգամ գործնականապէս կարելի լինի, շատ և շատ ժամանակ իզուր կը խլի. ամեն մի ուսուցիչ, որ հետաքրքրվում է ուսումնարանների գործով, նախապատրաստված կը լինի:

Կը յայտնվեն մեր ուսումնարանների պահանջները, միջոցները և այլն և այլն, ինքնըստինքեան կը ստանանք մեր ուսումնարաններին վերաբերեալ և ստատիստիքական տեղեկութիւններ:

Մեզ կարող են ասել, որ դա ահագին գիրք կը դուրս գայ, դորա տպագրելու միջոցները ո՞ր տեղից կը գտնվեն և այն, մի խօսքով առաջ կը բերվեն միայն տեխնիկական արգելքներ, որոնց առաջ առնել շատ հեշտ է: Մի՞թէ այսպիսի գործի համար մեր ուսումնարանները, որքան էլ խեղճ լինեն նրանք, պէտք է խնայեն 4—5 ռուբլի, իսկ այդքանը շատ շատ էլ է:

Դեռ մինչև ամառը ժամանակ շատ ունենք, այս ժամանակամիջոցում կարող ենք մեծ գործ կատարել:

Մենք կառաջարկէինք այդ գրքի մէջ ամփոփել և այն մի քանի յօդուածները ուսումնարանների կազմակերպութեան և պրոգրամների մասին, որոնք տրվեցան վերջին ժամանակներում մեր մամուլի մէջ, կը յիշեցնենք նոյնպէս „Մանկավարժական թերթ“-ի անցեալ տարուայ № 3-ում տպած „Ուսուցիչների միմեանց օժանդակութեան գանձարան“-ի կանոնադրութիւնը:

Թող մեր գրիչները նոյնպէս զբաղվեն այն դասագրքերի քննութեամբ, որոնք գործ են ածվում մեր ուսումնարաններում և դորանով շատ հեշտացնեն ուսուցիչների ժողովների գործը: Զէ՞ որ ուսուցչական ժողովները նոյնպէս պէտք է որոշեն թէ ի՞նչ դասագրքեր ընդունել ուսումնարանների մէջ գործածելու համար:

Զը մոռանանք, որ ուսուցչական ժողովները կարող են մեծ դեր խաղալ ուսումնարանների վիճակում, նրանցից կարող են կախված լինել հազարաւոր երեխաների զարգացումն, մեր մարաւոր և բարոյական յառաջադիմութիւնը:

Այդպիսի գործի հետ հանաք անել անկարելի է:

Միրզա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

12 Հոկտեմբերի

Երբ կարդացի «Մեղու» լրագրի 73 համարում Աբրահամ Ամիրխանեանցի սրտոտրոփութեամբ մի նամակ, ափշեցայ. պարզ ասած, ես չեմ կարողանում ինձ համոզել, որ մի ուսեալ անձնից, ինչպէս Ա. Ամիրխանեանցն է, կարելի է սպասել մի այդպիսի զզուելի նամակ, որ չէ վայելում գոնէ փոքր 'ի շատէ խիղճ ու բարոյականութիւն ունեցող անձնի: Ոչ հեղինակի [illegible] լեզուից և ո՛չ էլ հոգուց կարելի է յատկացնել նամակը Ամիրխանեանցին: Հեղինակը կարծես թէ առաքելոց դարի այն էլ մոլեռանդ և խաւարասէր ուրուականներից յարութիւն առած իր շաղակրատ միտքերը անկապ յօդուածով աւանդում է վաղարշապատցի Յրատարեանցին: Նամակի սկզբումն յանձնում է նրան յորդորել այնտեղի հայ-բողոքականներին ծախել ամեն ինչ որ ունեն և տալ աղքատներին: Ողորմելի հեղինակ.... եթէ ասենք սա Ա. Ամիրխանեանցն է, ապա միթէ՞ նա աստուածաբանութիւնը չէ սովորել, և չը գիտէ, որ Քրիստոնէութեան վառ դարը անցամ չը կարողացաւ շարունակել այս կարգը, շատ շուտով երևան եղան Անանիայի և Սափիրայի պէս մարդիկ, վասնորոյ գոյքի հաւասարութեան քարոզը դադարեց հէնց իսկ առաքելոց օրերով: Էլ ինչո՞ւ ենք հեռու մանգալիս. միթէ՞ Յրատարեանցը խելքից և բանականութենից զուրկ է, որ չէ կարող ասել Ա. Ամիրխանեանցին. թէ որ ամեն ինչ ծախել և տալ աղքատներին անհրաժեշտ է ամեն մի քրիստոնեայի, ապա ինչո՞ւ դու քո գոյքը, կարասիքը չես ծախում և բաժանում աղքատներին և հաւասար դառնում նրանց, որով և կենդանի օրինակ լինում մեզ, որ կարող լինենք մի անձն էլ է տեսնել երկրիս վրա այդ պարտականութիւնը կատարող. այն ժամանակ հեշտ կը լինէր ինձ ուրիշներին համոզել իրանց եղած չեղածը ծախեն և աղքատներին տան: Հեղինակը գրում է իր նամակի մէջ Յրատարեանցին. „Դու այդպիսով քիչ ժամանակի մէջ պիտի տաճապատկես քո հօտի թիւը, բայց խիստ զգոյշ կաց, որ մանուկների հացն շներին չը տաս, այլ միայն հաւատացեալներին:“ Զարմանալի առաջարկութիւն և անլուծելի խնդիր: Խե՛ղճ դու Յրատարեանց, ինչպէ՞ս պիտի անես, որ քո հօտիդ թիւն քիչ ժամանակամիջոցում տաճապատկես, երբ քեզ խիստ յանձնվում է վաղարշապատցի հայ-բողոքականների գոյքերը ծախել տալ և միայն հաւատացեալներին, այսինքն նոյն բողոքականների չքաւորներին տալ, ինչպէս բացատրում է „Մեղուի“ պարոն խմբագիրը, իսկ շներին, այսինքն հայ-Լուսաւորչականներին և այլոց „Մեղուի“ թարգմանութեամբ, ո՛չ մի օգնութիւն չանել: Ուրեմն մնում է քեզ, խեղճ մարդ, կամ խնդրես Աստուածանից, որ նա քեզ այս անգամ, իբր բացառութիւն ներկայ դարումն հրաշագործութեան շնորհ տայ, Մովսէս մարգարէի պէս հրամայես վաղարշապատցի սակաւաթիւ հայ-բողոքականներին ճանճերի պէս կարճ միջոցում բազմանալ, կամ ոտնակոխ պիտի անես քեզ պատուիրողի խրատը, անխտիր ողորմութիւնը բաժանելով և հայ-Լուսաւորչականներին, որ գուցէ կարող լինես նորանցից քո կողմը շահելով կարճ ժամանակում տաճապատկես քո հօտիդ թիւը: Էլ ուրիշ հնար չունես: Մի այդպիսի աղանդ երկրիս վրա դեռ գոյութիւն չէ ունեցել, նա միայն յիշեալ նամակի հեղինակի խարդախ ուղեղի մէջ առաջին անգամն է որ ծնունդ է ստացել, չեմ էլ կարծում, որ հեղինակն ինքն էլ հաւատայ, որ մի այդպիսի աղանդի հետևողներ գտնէ վայրենիների մէջն անգամ: Վերջացնելով իմ խօսքս, ամենախոնարհաբար խնդրում եմ „Մեղուի“ պարոն խմբագրին, յատուկ հետևել դատաստանով հաստատել նամակի ճշմարտութիւնը, որի համար հրապարակաւ պահանջում է ինքն Ամիրխանեանցը, որով նա, այսինքն „Մեղուի“ պ. խմբագիրն, ոչ թէ միայն իրան կազատէ կասկածանքից նամակի կեղծ լինելու կողմանէ, այլ և մեծ բարերարութիւն արած կը լինի Անդրկովկասում գտնվող հայ-բողոքականներին, գգուշացնելով նրանց հեռու պահել իրանց Ամիրխանեանցից, քանզի եթէ ճշմարտապէս նամակի հեղինակն ինքն Ամիրխանեանն է, ուրեմն նա մի վտանգաւոր անձն է, որից

ոչ թէ միայն լուսաւորչական հայերը և բողոքականները, այլ և մահմեդականները ու հեթանոսներն անգամ պարտ են զգուշանալ: Բայց եթէ արդարադատութիւնը անմեղ յայտնի Ամիրխանեանցին, այն ժամանակ ազգը իրաւունք ունի դասել կեղծ նամակ յօրինողին եղբայրասպան Այէնների և մանիչ Ասակների շարքում:

Է. Փիրբուդաղեանց

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

12 հոկտեմբերի

Ես վաղուց է ցանկանում էի հետևել իմ մեծ եղբօր, ձեր Աղէքսանդրապօլի թղթակցի, Պետրոս Բէպուրեանի օրինակին և թղթակցել ձեր լրագրին: Ահա այս առաջին անգամ լինելով Կարս, գրեցի այս երկտող նամակս:

Եթէ մի ակնարկ ձգենք Կարսի մեր հայ-կաթոլիկների դրութեան վրա և համեմատենք նրանց Աղէքսանդրապօլի կամ Ախալցխայի հայ-կաթոլիկների հետ, անշուշտ կարող ենք հասկանալ որ թէև Կարսի հայ-կաթոլիկները ունեն եկեղեցի, ունեն ուսուցիչներ, բայց շատ շատ յետ են մնացել միւս քաղաքների հայ-կաթոլիկներից, որովհետև Կարսի մեր դաւանակիցները չափազանց մոլեռանդ և կրօնամոլ են: Սրանք յարաբերութիւն չունեն իրանց համարիւն եղբայրների հետ և սաստիկ ատելութիւն է տիրում նրանց սրտերին դէպի իրանց այլակրօն եղբայրները:

Սրանք, ինչպէս յայտնի է, գաղթականներ են մեծ մասամբ Երզրումից: Հաւանական է, որ այդ ատելութիւնը այնտեղ եղած ժամանակէն սկսած է և մինչև այժմ տիրում է այդ ամբոխի սրտին:

Մինիս սկզբներում լինելով Կարս, ես բաղդ եմ ունեցել մի երկու անգամ պատահել մեր հայ-կաթոլիկների եկեղեցում, որ շինված է քաղաքիս հիւսիսային կողմում, բաւական վայելուչ և յարմար ձևով. դրսից թէև գեղեցիկ չէ երևում, բայց ներսից բաւական շքեղ է, յատակը ծածկված է փայտով, որի վրա սփռված են զանազան կարպետներ, որոնց վրա փափուկ նստում են մեր կրօնասէր հայ-կաթոլիկները: Թէ արք և թէ կանայք այստեղ նստում են գլուխները ծածկված, միայն մի քանի երիտասարդներ գլխաբաց են:

Ներս մտածիս պէս բոլորն էլ համարեա խորը կերպով նայում են իմ երեսին, կարծես թէ պատրաստ են հարցնել ինձ թէ ինչի՞ ես եկել, բայց չեն վատահանում:

Եթէ Կարսի կաթոլիկները մոլեռանդ են, պէտք է խոստովանել որ մեղաւորութիւնը նրանց չէ, այլ կը վերաբերվի մեր հայր-սուրբերին, որոնք փոխանակ հասկացնելու միամիտ ժողովրդին կրօնի և աղգութեան տարբերութիւնը, փոխանակ սերմանելու նրանց սրտերում եղբայրսիրութեան հոգին, աւելի և աւելի գրգռում են նրանց մոլեռանդութիւնը և ատելութիւնը դէպի մեր այլադաւան թէև համարիւն եղբայրները: Սրանք, այսինքն քահանաները կրկնում են հայ-կաթոլիկ ժողովրդին թէ լաւ է վրացի լինելը քան թէ հայ:

Մենք երբէք տեսած ու լսած չենք, որ հայ-կաթոլիկ կղերը քարոզէր իր ժողովրդին թէ կրօնը այլ է, ազգութիւն այլ, թէ մենք չը պէտք է միմեանց ատենք, բայց, ընդհակառակն պէտք է միմեանց սիրենք, քանի որ մի ազգային մարմնի անդամներ ենք, մի տան հարազատ զաւակներ: Եթէ կաթոլիկ կղերը եկեղեցու բեմը կանգնած քարոզէր ժողովրդին այդ տեսակ սիրալիր խօսքերով, ես համոզված եմ, որ ժողովուրդը այդ ատելութեան չէր առանձնանայ իրան համարիւն եղբայրներից: Ընդհակառակն մեր հայ-կաթոլիկ կղերը քարոզում է ատելութիւն, նախանձ և եղբայրատեցութիւն և հազար ու մի այդ տեսակ գարշելի մոլեռանդ խօսքեր.... Եթէ մեզանից մէկը պատահմամբ դնացած լինի լուսաւորչական եկեղեցին, նա պէտք է քառասուն օր ապաշխարի, որպէս զի թողութիւն գտնի: Քանի որ լուսաւորչական եկեղեցին նզոված կը համարվի, ոչ թէ միայն եկեղեցի երթալը մեզ արգելում է մեր կղերը, այլ և եկեղեցու դրան ներս նայելն անգամ մեղք կը համարվի:

Այդ նրանց, որոնք սուրբ-հայրերի պատկառելի անուն են կրում և նրանց տեղն են նստել, իբր ժողովուրդը հովվելու և ժողովրդի ցաւերը բժշկելու նպատակով, բայց փոխանակ ժողովուրդը լուսաւորելու, խաւարեցնում են միամիտ ամբոխը և Յիսուսի անունով, որ սիրոյ Աստուածն է, ատելութիւն և կատաղի երկպառակութիւն են քարոզում եղբայրների մէջ: Հարց առաջարկենք նրանց թէ նրանց սուրբ կրօնը ի՞նչ է քարոզում՝ սէր թէ նախանձ, եղբայրասիրութիւն, թէ ատելութիւն,—և թող պատասխանեն արդեօք իրանց վարմունքով յանցանք չեն գործում Յիսուսի դէմ, որի ներկայացուցիչ են կամենում լինել, բայց սիրոյ տեղ անհաշտ ատելութիւն են տարածում իրանց չորս կողմը:

Բայց գիտենք այն էլ, որ շատ չի անցնի և լուսաւոր դարին այժմեան խաւարը դիմանալ անկարող կը լինի, քահանաների գործողութիւնների վրա քաշած վարագոյրը կը պատռվի և ամեն ոք կը տեսնի լոյսի ճառագայթները: Իսկ ապագայի սերունդը այժմեան հոգևորականների մահարձանների վրա կը գրի՝ փոխանակ ուսուցիչներ քրիստոնէական եկեղեցու, կործանիչներ քրիստոնէական եկեղեցու անունը:

Ժողովուրդը այնքան ստորադրած է բարոյապէս, այնքան զուրկ է սեփական ինիցիատիվից ամեն բանում, այն աստիճան իր սեփական կամքը կորցրել է, որ եթէ նրան հարցնես այս կամ այն բանը,—նա քեզ կը պատասխանի՝ ,,Սպասիր, վարդապետին հարցնեմ, եթէ թոյլ տուեց, յետոյ քեզ պատասխան կը տամ:,,

Ահա ինչ տեղն են հասցրել վարդապետները խեղճ ժողովրդին:

Պօղոս Բէպուրեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Օրդուբադ 12 հոկտեմբերի

Ձեր «Մշակ» լրագրի 174 համարում մի յօդուած կարդացի, որ գրված էր Դաւրէժից Գէորգ Գ. Շահնազարեանց ստորագրութեամբ: Ես թէև անծանօթ եմ Ադամեան դպրոցի աշակերտների հետ, այնու ամենայնիւ կասեմ, որ յօդուածը լի էր գրպարտութիւններով դէպի Մ. Ք. Փափազեանցը: Անհերելի է բարդել անվայել ածականներ այնպիսի տաղանդաւոր եւ անծնուէր քահանայի վրա, որի նմանների թիւը տարաբաղդաբար շատ քիչ է մեզանում: Փափազեանց հայրիկն հանրածանօթ է շատերին իւր բարոյական մեծ յատկութիւններով:

Համարձակվում եմ պատասխանել Պ. Շահնազարեանցին, որ Փափազեանց այն նախատինք կրող հոգեւորաների դասին չէ պատկանում, ամօթ է անծնական զըժգոհութիւնը ազգավնաս կրքերի գործիք շինել: Երանի թէ Փափազեանցների պէս հարիւրաւոր պաշտօնատար քահանաներ լինէին մեր գաւառական քաղաքներում, ուր տակաւին զուրկ ենք նրանցից: Մեր «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիրը լաւ մտադ է գցել մեր հաւարակութեան մէջ. նրա շնորհով եւ նրա օրինակին հետեւելով անգէտը գիտունին այժմ տգէտ է անուանում:

Յ. Յովհաննէսեանց

ԵՐՏԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

,,ԳՕԼՕՍ'' ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսից «Գոլոս» լրագրին գրում են հետևեալը հոկտեմբերի 14-ից: Թիւրքաց դիպլոմատիան հետզհետէ զիջումներ է անում, մի և նոյն ժամանակ աշխատելով որքան կարելի է շատ դժուարութիւններ պատճառել պետութիւններին: Բայց Եւրոպայի հաստատամտութիւնը ոչնչացրեց Կ. Պոլսի քաղաքագէտների բոլոր հաշիւները և Ղերնօգօրլիայի որդիները բարոյապէս յաղթող են հանդիսանում և շուտով կը մտնեն Դուլցինիօ:

Սայիդ-փաշա բոլոր միջոցները գործ դրեց, որպէս զի կարողանայ շների կռիւ ծագեցնել ղերնօգօրցիների և ալբանցիների մէջ, բայց նա չը կարողացաւ իր նպատակին հասնել, որովհետև «փոքր» իշխանի կառավարութիւնը քաղաքականապէս այնքան հասունացած էր, որ ղերնօգօրցիների քաջութիւնը և եռանդը կարողացաւ զսպել և զոհել նրանց քաղաքական հաշիւներին և խոհեմութիւնը: Սայիդ-փաշայի համար անսպասելի էր այդպիսի խոհեմութիւնը դելի-իշխանից (գիժ-իշխանից) և այդ պատճառով գլուխը շարժելով հրամայեց Ռիզա-փաշային ձեռքերը լուանալ և այլ ևս գործի մէջ չը խառնվել: Շատ հետաքրքիր է այն հանգամանքը, որ երբ Ռիզա-փաշա յայտնեց իր չէզոքութիւնը, ալբանցիները այլ ևս այնպիսի «կատաղի հայրենասէրներ» չէին, ինչպէս նրանց նկարագրում էին թիւրքաց շըրջաբերականները:

Նկատելով, որ Կ. Պոլսի «խունկիարը» այլ ևս առաջվայ նման աներկիւղ չէ վարվում միացեալ նաւատորմի հետ, ալբանցիները «կատաղի հայրենասէրներից» անցիները «կատաղի հայրենասէրներից» անտարբեր քաղաքացիներ դարձան և ալբանական առաջնորդներից մի քանիսը շտապեցին յայտնել իրանց զենակիցներին, որ նը-բանք Դուլցինիօի բանակից ուղևորվեն իրանց խաղաղ բնակարանները: Դու ճշմարիտ առանց թիւրքաց կառավարութեան դրդման ո՞րտեղից կարող էր երևալ «ազգասիրական ձգտումներ» մի ժողովուրդի մէջ, որի կոչումը դարերի ընթացքում այնքան է եղել, որ ծառայել է իբրև վարձկան զօրք Բալկանեան թերակղզու վրա եղած զանազան պատերազմների ժամանակ: Ո՞րտեղից կարող է ունենալ քաղաքական և քաղաքային արժանաւորութիւններ մի ժողովուրդ, որի լեզուն, դեռ իր սեփական այբենարանը չունենալով, այնքան հասունացած չէ, որ կարողանայ յայտնել ամենատարրական մտքեր: Ալերջապէս մի ժողովուրդ, որի կրօնական ներկայացուցիչները միմեանց հակառակ տարբերին են պատկանում, ինչպէս թիւրքաց մուլլան, ուղղափառ քահանան և կաթոլիկ վարդապետը, մի՞թէ կարող է համերաշխ ձգտումներ ունենալ, կամ հասկանալ ընդհանուրի շահերը, եթէ արտաքուստ դրդված չը լինի: Ուրեմն կասկած չը կայ, որ «ալբանական բոլոր այդ անկարգութիւնները և շարժումները» պատրաստված էին Ստամբուլի կառավարիչների ձեռքով, որոնք նահանգապետների և գլխաւոր նահանգապետների անուններ են կրում:

Դուլցինիօի նահանգը ստանալուց յետոյ կը տեսնէք, թէ ղերնօգօրիական իշխանը ինչպիսի հաւատարիմ հպատակներ կունենայ այդ նոր նահանգի մէջ: Ուրեմն ո՞րքան միամիտ էր մինչև այժմ Եւրոպան, որ փաստերը ընդունում էր այնպէս, ինչպէս նրանց նկարագրում էր թիւրքաց կառավարութիւնը:

Նոյնպիսի քաղաքական կատակներ և խաբեբայութիւններ են թիւրքաց կառավարութեան յայտնութիւնները, իբր թէ „քիւրդերը կատաղած են և մտադիր են զէնքը ձեռքին բողոքել Եւրոպայի միջամտութեան դէմ իրանց երկրի նախնական կարգերը և կանոնները փոփոխելու համար:“ Այդ բոլորը 'ի հարկէ հայերին է վերաբերում և ոչ թէ քիւրդերին, որոնք օտար ընտանիք են մտել և այնտեղ իրանց տանտէրեր են համարում: Բայց „քիւրդաց բողոքի“ նշանակութիւնը մեկնելու համար մի քանի խօսք կասենք:

Դեռ հանգուցեալ սուլթան Աբդուլ-Ազիզի ժամանակ երկրի բարօրութեան համար վտանգաւոր համարված քիւրդ գլխաւոր ցեղերը գլխատված եանիչարների վիճակին էին դատապարտված, եթէ մշտական բնակութիւն չը հաստատէին կառավարութենից նշանակված տեղերի վրա: Այդ դարևոր հովիւները հէնց որ տեղեկութիւն ստացան սուլթանի Ֆիրմանի մասին, որ սպառնում էր նրանց ազատ թափառականութեանը սարերի մէջ և աւազակութեանը դաշտերի մէջ, շուտով հաւաքեցին իրանց վրանները և երկու շաբաթվայ ընթացքում լեռնային Հայաստանից Պարսկաստան անցան: Այդպիսով թիւրքաց կառավարութիւնը համոզվեցաւ, որ քիւրդերին չէ կարելի մշտաբնակ ժողովուրդ և սուլթանի հարկատու դարձնել, և այն ժամանակից ձեռք վերցրեց այդ անպիտան արարածներից:

Յանկարծ Ռուսաստանը հարց է բարձրացնում հայերի վիճակը քիւրդերից և չերքեզներից ապահովելու մասին: Ի՞նչպէս կարելի է լուծել այդ հարցը, եթէ ոչ հրամայելով քիւրդերին մշտական բնակութիւն հաստատել հայերի մօտ և պատասխանատու շինել իրանց արարքների համար, կամ հակառակ դէպքում երկրից բոլորովին հեռանալ: Հայերը այդ երկու դէպքերումն էլ կիշխէին իրանց հայրենի երկրի մէջ, որովհետև մշտաբնակ քիւրդը մի տասարվայ ընթացքում կը կորցնի իր ցեղական յատկանիշները՝ լեզուն և կրօնը և կը միանայ կուլտուրական իր հարևանի հետ, իսկ դրանից յետոյ Հայաստանը բոլորովին կը դուրս գար թիւրքաց իշխանութեան տակից և հիմնայատակ կանուէր թիւրքաց տիրապետութիւնը Փոքր-Ասիայի մէջ:

Այդպիսի հետևանքին չը հասնելու համար, թիւրքաց կառավարութիւնը Աբեդդին-փաշայի բերանով հրամայեց Հայաստանի նահանգապետներին բռնել պատահած քիւրդ առաջնորդներին և պահպան զօրքերի հետ նրանց Կ. Պոլիս ուղարկել: Զանազան խաբեբայութիւններով բռնված խեղճ վայրենիները համոզված էին, որ Կ. Պոլիս հասնելուն պէս նրանց կամ կախաղան կը բարձրացնեն, կամ ոտքերը կտրած ծովը կը նետեն: Բայց որքան մեծ էր վայրենիների զարմանքը, երբ նրանք արժանացան սուլթանի տեսութեանը և բնակվեցան արքունական ամենալաւ բնակարանների մէջ: Այնուամենայնիւ, այդ բոլորը նենգութիւն համարելով իրանցը անսպասելի կերպով գլխատելու համար, քիւրդերից մի քանիսը հէնց որ դուրս եկան քաղաքը, հագուստները փոխած փախան Հայաստանի լեռները:

Աբեդդին-փաշա մնացած ողորմելի վայրենի հովիւներին հրաւիրեց իր պալատը և

յայտնեց Նրանց, թէ որովհետև թէ ինքը և թէ քիւրդերը բոլորն էլ մարգարէի որդիք են և որովհետև իրանց վտանգ է սպառնում Ֆրանկների նենգութիւններից, հրաւիրել է Նրանց միասին խորհրդակցելու համար: Այրենիները և սաղրազամը երկար խօսում էին, շերբեթ էին խմում, քիւրդերը մի քանի ոսկի ընծայ ստացան մեծ սադրազամից և վերջացրին Նրանով, որ կնիքներ դրոշմեն մազբաթի վրա (բողքագիր), որը արդէն պատրաստ էր և Նրանց առաջարկեց Աբեդդին-փաշան: Այդպիսով պատրաստվեցաւ «քրդական միութեան» բողոքագիրը հայերին քաղաքական իրաւունքներ տալու դէմ, որ վնասակար է քիւրդ ազգութեան (?) շահերին: Եւ թիւրքաց մինիստրը առանց ամաչելու ներկայացրեց եւրոպական պետութիւններին այդ բողոքագիրը, ինչպէս ուշադրութեան արժանի մի գործ: Այս տեսակ են եղել նոյնպէս ալբանցիների բողոքագրերը, որոնց թիւրքաց կառավարութիւնը ներկայացրել է եւրոպական կառավարութիւններին:

Դեռ մի ամիս առաջ ես ձեզ գրել էի, որ քիւրդ յայտնի առաջնորդ Պեսեր-խանի որդի, Ռեհրի-բէյ, սուլթանից փաշայի աստիճան ստացաւ և ուղարկվեցաւ Հայաստան «առանձին յանձնարարութեամբ»: Ինչպէս այժմ յայտնվեցաւ այդ յանձնարարութիւնը այն էր, որ սուլթանի ընտրեալը յանձն առնի առաջնորդել քիւրդ խումբերին, որոնք թիւրքաց կանոնաւոր զօրքերի հետ պատերազմում են հայ ապստամբների դէմ:

Այժմ լրագիրները հաղորդում են, որ Ռեհրի-Բէյ անդադար անաջողութիւնների է հանդիպում, որովհետև լաւ առաջնորդված հայ ապստամբները միշտ յաղթում են: Դեռ չը հրատարակված, բայց արդէն յայտնի տեղեկութիւնների համեմատ Սամի-փաշա շուտով պէտք է դատարկի Վասպուրականը և իր գլխաւոր բանակը տեղափոխի Էրզնկայ, ուր Նրան հրամայում է յաղթող Մարշիմենը իր լաւ կազմակերպված զօրքերով: Ուրեմն ո՞րտեղ մնացին բողոքող քիւրդերը, որոնց մասին աղաղակում էր Թիւրքիան: Նրանք մասամբ միացել են ապստամբների հետ, մասամբ անցել են պարսկական սահմանները և այնտեղ կողոպտում են և մասամբ կողոպտում են նոյն իսկ փախստական թիւրքերին, մինչդեռ իրանք Նրանց դաշնակիցներ են համարվում:

Այասատանի մէջ պատահած անցքերը կատաղեցնում են Թիւրքիային մանաւանդ այն պատճառով, որ Նրանք տեսնում են, թէ այդ գործերի մէջ խառն են ատելի „մոսկվացիները», որոնք այդքան ստորացնում են իսլամը: Չը լինի թէ Թիւրքիան կամենում է վրէժ առնել Ռուսաստանից Վէլի-Մահմեդի միջոցով, որին, ինչպէս ասում են, թիւրքաց կառավարութիւնը կատարեալ ազատութիւն է շնորհել: Ոչինչ, Մարշիմենի զինակիցները դեռ շատ այդպիսի յանցաւորների կը ջարդեն:

ՔՈՒՐԴԵՐԸ

—

Թէրճէմանը Այգիդաթ լրագիրն իւր երէկուան թուով հետևեալը կը հրատարակէ „Ռիւրտիսթան“ խորագրոյն ներքև:

«Վերջերս Վանէն մեզ եկած նամակ մը Քրդստանի վիճակին վերայ ընդարձակ տեղեկութիւններ կուտայ:

«Քուրդք՝ Անատոլուի բարենորոգումներուն տերութեանց կողմէ մասնաւոր խնդրոյ մը կերպարանք ստանալուն յոյժ կարևորութիւն կուտան, և մեծ յուզման մէջ են մտածելով որ իրենց նահանգն ալ Արևելեան Ռումելիի նահանգին նման բան մը կրնայ լինել:

«Քրդստանի Քուրդք՝ Կ. Պոլիս բնակող Քուրդ երևելեաց կողմանէ ղրկուած նամակներէն ապագայն լաւ չը կրնալով դուշակել, կառավարական պաշտօնատարաց կը դիմեն հասկնալու համար թէ գործոց վիճակն ինչ պիտի լինի ապագային մէջ, իսկ անոնցմէ ևս բացորոշ տեղեկութիւն մը չեն կարող ստանալ:

«Թափառիկ ցեղեր քանի որ տեղէ մը ուրիշ տեղ փոխադրեն իրենց բնակութիւնը, շրջակայ ցեղերու գլուխներն անմիջապէս յիշեալ Աշիրէթին մեծին քով հաւաքուելով, կը հարցնեն թէ Քրդստանի վրայ ինչ տեղեկութիւն բերած է, և անկէ ալ բացատրութիւն մը չը կրնալով ստանալ, իրենց առջև մտահոգութեան մէջ կը մնան:

«Ու այժմ Քրդստանի մէջ Միութիւն մը կազմելու ո՛ և է ձեռնարկ չը կայ եղեր. միայն թէ Քուրդ Պէյեր Քրդստանի վիճակին և պէտք եղած բարենորոգմանց վրայ իրենց դիտողութիւնները Ռ. Դրան և կամ Եւրոպոյ յայտնելու համար խորհրդակցելու պէտքն ըզգացեր են, որով կը յուսացուի եղեր թէ ի մօտոյ Միութիւն մը կազմեն. բայց այս Միութիւնն ո՛չ թէ Բլղանիական Միութեան նման զինեալ Միութիւն մը, այլ լոկ Քուրդ Պէյերու և երևելեաց բանակցութեան և խորհրդակցութեան ժողով մը պիտի լինի եղեր: Օվ Քուրդք արտաքին կամ ներքին ո և է թշնամոյ մը յարձակումներէն չեն վախնար եղեր, լաւ հասկցած լինելով թէ իրենց խնդիրը տերութեանց միջև բանակցութեամբ կրնայ վերջանալ:»

(Մամի)

ԱՆԳԼԻԱ

—

Լօնդոնից „Polit. Corresp.“ լրագրին գրում են հոկտեմբերի 15-ից:

Այն ժամանակից, երբ լուր ստացվեցաւ, թէ սուլթանը պատրաստ է գիջել Ազգերնոգորիային Դուլցինիո, հասարակութեան հետաքրքրութիւնը արևելեան հարցով բաւական թուլացաւ: Դրա փոխարէն կառավարչական շրջանները չափազանց հետաքրքրվում են Արևելքով: Ոչ թէ միայն Գլադստոն կամենում է շարունակ ճընշում գործել Ռ. Դրան վրա դեռ չը վճռուած միւս հարցերի պատճառով, այլ ամբողջ մինիստրութիւնը համոզված է, որ անգլիական կառավարութիւնը այնպիսի ընթացք է բռնել, որ այլ ևս չէ կարող ճնշում չը գործել Ռ. Դրան վրա: Անգլիական մինիստրութեան դրութիւնը այժմ բաւական դժուար է: Խաստակութիւնը, ուրախանալով, որ Դուլցինիոյի հարցի մէջ միայն երկիւղ կրեց, ցանկանում է, որ կառավարութիւնը չը խառնվի Թիւրքիայի գործերի մէջ և ուշադրութիւն չը դարձնի նրանց բնական ընթացքի վրա: Այդ հասարակութիւնը, թէպէտ և մեծամասնութիւն է կազմում, բաղկացած է այնպիսի մարդկերանցից, որոնք շատ չեն հետաքրքրվում արտաքին հարցերով, բայց մի որ և է անցքի պատճառով, կամ Գլադստոնի ճառից ոգևորված, կարող են ստիպողական քաղաքականութեան ամենաեռանդոտ կուսակիցները դառնալ: Կառավարութիւնը կազմող քաղաքագէտները քննում են արևելեան հարցը Անգլիայի արժանաւորութեան տեսակէտից, հետևապէս ազատամիտ կուսակցութեան շահերի տեսակէտից: Նրանք հասկանում են, որ Անգլիան ամբողջ աշխարհի ծաղրածութեան առարկայ կը դառնայ և կը կորցնի իր բարոյական ազդեցութիւնը Եւրոպայի մէջ, եթէ Դուլցինիոի հարցը աջողեցնելուց յետոյ, յետ կը կանգնի Յունաստանի և Այասատանի աւելի նշանաւոր հարցերի մէջ: Այդպիսի հետևանքը վտանգաւոր կը լինի Անգլիայի համար, իսկ ազատամիտ կուսակցութեան համար կորբստաբեր հետևանքներ կունենայ: Կառավարութիւնը մտադիր է նոյեմբերին հրաւիրել պարլամենտը Նրանից բացառական յանձնարարութիւններ ստանալու համար իրլանդացի խռովարարների դէմ: Եթէ կառավարութիւնը ծովային ցոյց գործեց, ուրեմն դիմեց ստիպողական միջոցի միայն Նրա համար, որ Ազերնոգորիային մի անպտուղ լեռը տայ, իսկ յունական և հայկական խնդիրների վերաբերութեամբ միայն շրջաբերականներով կը բաւականանայ, միթէ՞ նա կը կարողանայ ընդիմադրել այն հարցերին, որոնք կը թափվեն պարլամենտի մէջ կառավարութեան հակառակորդների կողմից: Ռշմարիտ է Գլադստոնի քաղաքականութիւնը մինչև այժմ հաւանութիւն էր ստանում մեծ պետութիւնների կողմից, բայց այնուամենայնիւ գործի սկզբնապատճառը Գլադստոնն է և պետութիւնները կարող են յետ կանգնել, հէնց որ կը տեսնեն, թէ Գլադստոն շատ հեռու է գնում: Բացի այդ անգլիական առաջին մինիստրը խոստացաւ ճընշում գործելու Թիւրքիայի վրա: Այդ քաղաքականութիւնը նա միշտ պաշտպանում էր, քանի որ ինքը պատկանում էր ընդդիմադրական կուսակցութեանը: Անգլիական պարլամենտի վերջին ընտրութիւնների ժամանակ նա չէր ծածկում, որ իր քաղաքականութեան նպատակն է ենթարկել Թիւրքիային Եւրոպայի կամքին: Ազ կարելի մերժել եւ այն իրողութիւնը, որ այժմ Գլադստոնն է ազատամիտ կուսակցութեան ներկայացուցիչը: Իր հռետորական ընդունակութիւններով եւ եռանդով Գլադստոն ամենից շատ նպաստեց, որ կառավարութիւնը այժմ ազատամիտների ձեռքին է և բացի այդ նա միակ է, որ կարող է զսպել արմատական կուսակցութիւնը: Ուրեմն խաբվում են այն մարդիկ, որոնք կարծում են, թէ Գլադստոնի մինիստրի օգնականները կարող են ստիպել Նրան հետևել աւելի չափաւոր քաղաքականութեանը Արևելքի մէջ: Ազ կարելի մերժել այն իրողութիւնը, որ լորդ Գրենվիլ, մարկիզ Սալիսբուրի, լորդ Սելբորն եւ կառավարութեան միւս անդամները չեն հաւանում Գլադստոնի քաղաքականութիւնը, բայց պետական այդ մարդիկը շատ լաւ հասկանում են, որ եթէ չենթարկվեն Գլադստոնի կամքին, իրանց կուսակցութեանը մահուան հարուած կը տրվի: Այդ է պատճառը, որ լորդ Գրենվիլ երկրորդական դիրք է բռնել եւ արտաքին գործերի կառավարութիւնը յանձնել է իր օգնական Չարլզ Դիլկին: Ուրեմն Դուլցինիոի հարցը վճռելուց յետոյ անգլիական կառավարութիւնը մտադիր չէ հանգստանալ, բայց մի եւ նոյն ժամանակ նա մեծ նշանակութիւն է տալիս եւրոպական համաձայնութեանը: Թէպէտ անգլիական կառավարութիւնը այլ ևս հաւատացած չէ պետութիւններից երկուսի համաձայնութեան մէջ, բայց այնուամենայնիւ յոյս ունի, որ կը կարողանայ համոզել միւսներին, մինչև անգամ Ֆրանսիային Յունաստանի օգտին ծովային նոր ցոյց անելու:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 10 հոկտեմբերի

Կառավարութիւնն օրէց օր ս. պատրիարքի դէմ թշնամական ընթացք մը բռնել սկսեր է: Սուլթանն եւ իր «alter ego» մինիստրը Սայիդ բաշա խորհեր են միչտ իսկ աւորել Ներսէսը: Վերջերումս, Մէճլիսի խասի մէջ Սայիդ բաշան յետ յայտարարելոյ թէ հայոց պատրիարքն աներկիւղ կը շարունակէ, հակառակ Բ. Դրան կամացն եւ հրամանաց, միշտ ընթանալ եւ հաղորդակցել եւրոպական դեսպանների հետ, ասէր է թէ պատրիարքը լուծելու միակ միջոցը զինքը աւորել է եւ յաւելցուցեր է, նոյն իսկ սուլթանին խորհուրդն էլ այս է: Մինիստրներու ժողովն հաւանութիւն ցցուցեր է, ի բաց առեալ Սաֆվէթ բաշան եւ նե իմ բաշան, առաջինն ծանօթ է իբր խոհական մի մարդ, իսկ երկրորդն իբր բարեկամ քրիստոնէից: Սրա տարաբախտաբար հակառակեր են սուլթանի եւ Սայիդի կամաց, ասելով թէ, մի այդպիսի հաղածանք հայոց պատրիարքի դէմ կարող է ոչ միայն նետել բոլոր հայերը Ռուսիոյ դրկաց մէջ, այլ եւ նաեւ վերին ատիճան զայրացնել քրիստոնեայ տէրութիւնները: Այս ամենապարզ տրամաբանութիւնը յաղթեց, եւ Ներսէսի տարադրութիւնը տեղի չունեցաւ: Անշուշտ մեծ ջարչարանք պիտի լինէր այդ մեր արի պատրիարքին համար, բայց նա ի բոլոր սրտէ զոհ կընդունէր ուան առնուլ այդպիսի մի խաչ, քանի որ իւր բաշելիք ամեն մէկ նեղութիւնն համայն ազգին ազատութեան դատին իւր մէկ մէկ զօրաւոր փաստ պիտի ծառայէր: Այս դարուս սկզբում յունաց դէմ տեղի ունեցած բարբարոս ուժիւնք կը վերանորոգեն այժմ հայոց դէմ: Թունաւորելու ջանքէն յետոյ աքսորելու ջանք, եւ այս ամեն վտանգաց առջեւ Ներսէս կանգուն կը մնայ, անվեհեր, եւ հաստատ իր ազգասիրութեան մէջ, աներկիւղ իր դժուար պաշտօնին վրա: Իր անձնական հիւանդութիւնն որ անբուժելի է, մէկ կողմէ, ազգին վրա եկած հազար ու մէկ աղէտները միւս կողմէ, իր հոգոյն մէջ մի բոպէ յուսահատութիւն չեն իջած: Թէ զիտնայիք Հայաստանէն եկած աղեխարշ հառաչանքները: Սովը, կարծես, աւելի կոտորած տարու է այս տարի քան անցեալ ամեռ, եւ պատրիարքն դարձեալ դնէ գլուն ընկած է նորից հանգանակութիւն սկսելու համար: Այդ անձն, այնքան հիւանդ, այնքան յոգնած, երեւակայեցէք, տունէ տուն ման կուգայ սովելոց համար օգնութիւն խնդրելու: Ինչ կընէ մեր Վեհափառ Կաթողիկոսը: Երբ պիտի գթայ ինքն էլ Հայաստանի իր զաւակաց վրայ: Իր մօտ կը գտնուի 17000 ռուբլի, տէր Աստուած, ինչի չը տար կարօտելոց, սովելոց: Ինչ անյարմար պատրուակ է, երբ Արարատ ամսագիրը կը պատասխանէ թէ այդ գումարով դպրոց շինելու է: Էհ, այդ դպրոցներու կարեւորութիւնն էջմիածինէն յառաջ մենք արդէն գիտէինք. ինչ վերաբերն, անմանրի իմաստութիւն է վերեվմանաց վրա վարժարան հաստատել:

* * *

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՆԻՒ-ԻՕՐԿ, 22 հոկտեմբերի: Այնրապետական Գօրֆիլդի նախագահ ընտրելը ապահոված կարելի է համարել:

ԴՈՒԲԼԻՆ, 22 հոկտեմբերի: Երէկ մինիստրութեան պրոկուրօրը յանձնեց դատարանին մեղադրական գործ իրլանդական կալուածական միութեան անդամների դէմ: Մեղադրուածների թուումն են Պարնել, Դիլլոն, Սեկսան, Բեգար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 հոկտեմբերի: Պաշտօնապէս հաղորդված է. Ուֆիմցևայա նահանգի խուզարկութիւնները յանձնված են սենատոր Պովալիվսկուն: Լրագիրները հաղորդում են, որ պետական տնտեսութեան նախագահ Աբազա ֆինանսների մինիստր կը նշանակվի: Գրէյգ թողնում է իր պաշտօնը: „Молва“ լրագիրը լսել է, որ Գրէյգ կը փոխարինէ Պոսեատին: „Новости“ լրագիրը լսել է, որ Գրէյգ առեւտրական մինիստր կը նշանակվի: Քաղաքական գործը 16 անձանց, որոնք պատկանում են կառարող կոմիտեին, կը սկսվի Պետերբուրգի զինուորական դատարանի մէջ հոկտեմբերի 25-ին:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ եռամեայ պատկերազարդ հանդէսն կը հրատարակուի 'ի 1881 թուականին չորս անգամ, այն է՝ **Յունուարին, Ապրիլին, Յուլիսին և Հոկտեմբերին։** Նորա իւրաքանչիւր տետրը կը պարունակէ իւր մէջ 3—4 քառածալ թերթ 12—16 պատկերներով նոյն ձեւով, ինչպէս հրատարակուեցաւ մինչև ցայսօր։

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ պատկերազարդ հանդիսի նիւթն, ուղղութիւնն, տպագրութեան գեղեցկութիւնն և պատկերաց ընտրութիւնն կը մնան անփոփոխ ինչպէս էին մինչև ցայժմ։

Տարեկան բաժանորդագրութեան գինն, հանդերձ առաքմամբ, է 5 ռուբլի կանխիկ վճարելի։ **Խմբագրութեան հասցէն այս է.** *Москва, Меньшикова башня, домъ Милованова, Ея Превосходительству Издательницѣ армянскаго журнала „Маякъ Арменій“ Софьѣ Мсеріанцъ.*

Ռուսաստանի Հայք կարող են բաժանորդ գրուիլ բաց 'ի խմբագրութենէն՝ նաև ներկայ ամի պատուելի գործակալաց մօտ, ևս և 'ի Տփխիս՝ Կենտրոնական և Ս. Գրիգորեանցի գրավաճառանոցներում, և Երևան՝ Գ. Եղբար Գուլամիրեանցի մօտ։

Եթէ «ՓԱՐՈՍԻ» 1880 ամի պատուելի բաժանորդքն բարեհաճին նորոգել իւրեանց բաժանորդագրութիւնը և առաջիկայ 1881 տարւոյ համար՝ մեր հանդիսի հրատարակութիւնն ապահովուած կը լինի։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՍՈՓԻԱ ՄՍԵՐԵԱՆՑ

6—10

ՊԱՏԻՒ ՈՒՆԻՄ ՅԱՅՏՆԵԼ *Թիֆլիսի յարգելի հասարակութեանը, մանաւանդ* **ԹԻՒՐՔՅՈՒՆԱԿԱՆ ԾԽԱԽՈՏԸ** *սիրողներին, որ ներկայ ամսոյ մէջ ծխախոտի մեր* **ԳՈՐԾԱՐԱՆԻ** *մէջ ստացված են Թիւրքիայից* **ԱՄԵՆԱԲԱՐՁՐ** *յատկութիւնների* **ԾԽԱԽՈՏՆԵՐ,** *այսինքն* **ԵՆԻՋԻՕ ԿԷՕԲԷԿ, ՊԵՐԱԼՋԱՆ ՐԱՄԱՆ, ՀՈՒՄԱ, ՐԱՖԻԱ** *և* **ՍԱՄՍՈՆ** *ամենաբարձր տեսակից։ Յիշեալ ծխախոտներից միայն* **ՊԱՏՈՒԻՐՈՂՆԵՐԻ** *համար կը պատրաստվեն։* **ԳԻՆԸ 1 ՖՈՒՆՏԻ** *համար* **ՎԵՑ ՏԵՍԱԿՆԵՐԻՑ** 4, 5, 6, 8, 10 *և* 12 *ռ., մի ֆունտ* **ՍԱՄՍՈՆԻ ԾԽԱԽՈՏԸ** *արժէ* 3, 4 *և* 5 *ռ., պ. պ. գնողներին խնդրում եմ իրանց* **ՊԱՏՈՒԻՐՈՂՆԵՐՈՎ, ԴԻՄԵԼ** *ծխախոտի իմ* **ԽԱՆՈՒԹԸ,** *որ գտնվում է* **ԴՎՈՐՑՈՎԱՅԱ** *փողոցի վրա,* **ԱՐԾՐՈՒՆՈՒ** *տանը* **№ 1։ ՕՏԱՐԱՆԱՎԱՆԱՑԻ** *պարոններին խնդրում եմ պատուէրներ* **ՆԱՄԱԿՆԵՐՈՎ, և ՓՈՂ,** *ուղարկել պատուէրների համեմատ։* **Պատուէրները** *անյապաղ կը կատարվեն և կուղարկվեն առաջին* **ՓՕՍՏԱՅՈՎ։**

Գործարանատէր **Ն. ՐՕԶԱՐԶԵԱՆՑ**

Կենտրոնական Գրավաճառանոցի հրատարակութեամբ այս օրերս լոյս տեսան Ստեփաննոս աւագ քահանայ Տէր-Ստեփանեանցի աշխատասիրած „Սկզբունք քրիստոնէական ուղղափառ հաւատոյ Հայաստանեաց եկեղեցւոյ“ դասագրքի երկրորդ տպագրութիւնը հետևեալ յաւելուածներով. համար 11. *Յակոբ Նահապետի որդիքը.* 12. *Յովսէփը բանտում.* 13 *Յովսէփի փառքը.* 14. *Յովսէփի եղբայրները գալիս են Եգիպտոս.* 15. *Յովսէփի եղբայրների երկրորդ դալուստը Եգիպտոս,* 16. *Թէ ինչպէս եղբայրները ճանաչեցին Յովսէփին.* 17. *Յակոբի Եգիպտոս տեղափոխուիլը։*

Աղօթք վասն թագաւորի «Խաչի քո Քրիստոս», «Այսօր կանգնեցաւ և Էջմիածին 'ի Հօրէ» շարականները դասաւորված են իրանց տեղերում պատմութեան իմաստին համաձայն։ Գինը ըստ առաջնոյն 50 *կոպէկ է։*

Վերջապէս հարցմունքները, որոնք առաջին տպագրութեան մէջ զետեղուած էին իւրաքանչիւր յօդուածի ներքոյ, այժմ անփոփուեցան գրքերի վերջումը առանձնապէս։

—

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է նոյն գրավաճառանոցում «Նոր դասագիրք թուաբանութեան» Գ. Վարձելեանի, գինն է 70 *կոպէկ։*

—

		Ռ.	Կ.
1.	Ժողովրդական այբբենարան	—	5
2.	Տէր-Գէորգեան Մայրենի լեզու ա. տ.	—	35
3.	— — Մայրենի լեզու բ. տ.	—	40
4.	— — Մայրենի լեզու գ. և դ. տ. . . .	—	70
5.	Աղայեանց ուսումն Մայրենի լեզուի	—	15
6.	Ս. Մանդինեան Նահապետական և Հայր. աշխարհ. .	—	60
7.	— Ազգային ընտանեկան աշխարհ ա. տ. .	—	25
8.	— — Դիւցազանց. աշխարհ. . . .	—	30
9.	— Ազգ. ու ընտան. աշխարհ ուսուցչաց ձեռնարկ	—	70
10.	Տէր-Դաւթեան դասագիրք ռ. լ. Русское Слово . . .	—	45
11.	Հայվազեան Գ. Ա. Ե. Նախակրթանք հ. լեզուի մ. ա.	—	40
12.	Եղիշէ, պատմութիւն Վարդանեանց	1	=
13.	— Նոյն հասարակ կազմի վրա	—	20
14.	Տէր-Սարգսեան հայերէն վայելչագրութեան օրինակ. .	—	20
15.	Պալասանեան Քերականութիւն Մայրենի լեզուի . .	—	50

Վերոյիշեալ գրքերի գնողները „Կենտրոնական գրավաճառանոցից“ նշանաւոր զիջումն են ստանում։



Կ. ՊԱՆՑԵՐ

ԸՏԱՄԱՆՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ



տուն Ս. Ղուբալովի։ Կոզ ձմեռվայ սեզօնի համար առաջարկուում են պատուելի հասարակութեանը **ՄԵԾ ՔԱՆԱԿԱՈՒԹԵԱՄԲ ՁԵՌՔԻ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ,** *եւրոպական առաջնակարգ* **ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ** *ամենանոր* **ՁԵՌԵՐԻ** *չափազանց* **ԷԺԱՆ** *գներով, այսինքն Ձեռքի մեքենաներ* 12—15 *ռուբլի։ Ոտքի* 50—80 *ռուբլի։*

17—52

ՕՐԱՑՈՅՑ 1881 թ.

Ռ. Յ. Տէր-Աբրամեանցի, գինն է 15 կոպէկով։

Վաճառվում է Ս. Աքարեա Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոցում Տփխիս։

1—20

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են **Կենտրոնական և Ս. Գրիգորեանցի** գրախանութներում Ս. Մանդինեանի հետևեալ դասագրքեր.

1) Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբբենարան (ա. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . 25 կ.

2) Նոյն ը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) . . . . . 75 կ.

3) Ազգային Դիւցազնական աշխարհ (բ. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . . . . 30 կ.

4) Նահապետական և Հայրենի աշխարհ (գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք (բ. տպագրութիւն) . . . . . 65 կ.

Ընդունում եմ ամեն տեսակ պատուէրներ **ԿՕՆՖԻԿՏՆԵՐԻ, ՊԵՐՕԺՆԻ, ՍՈՒԽԱՐԻ** զանազան տեսակի, մուրաբի և ընտիր տեսակ **ՖՐՈՒԿՏՕՎԻ ԿՕՆՖԻԿՏԻ,** և ամեն տեսակ կանդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով։ Պատուէրները կը կատարվեն ամեն ճշտութեամբ, ցանկացողք կարող են դիմել ինձ հետևեալ հասցէով, Въ Тифлисъ, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ, ВНА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ, МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ։ Փոստային կոնֆիկտ պահանջողների ճանապարհածախքը ինձ վրա եմ առնում։

27—50

ՎԱՐՁՈՎ տրվում է ՁՈՐՍ սենեակից բաղկացած մի բնակարան, խոհանոցով և ներքնատանով Օրբէլեանի փողոցի վրա № 4, ներքին յարկում, Յակոբ Դանդուրովի տանը։

ԲԱՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՈԿՏՕՐ ԵԱԿՈՒԲՕՎԻՉ շարունակում է ընդունել ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ՍԵՖԻԼԻՏԻԱԿԱՆ հիւանդներին երեքշաբթի օրերը առաւօտեան 11 ժամից մինչև 2 ժամը։ Գօլովինսկի փողոց, Մուխրանսկու տուն։

6—6

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացվեցաւ ՇՈԿՈԼԱԴ ԵՒ ԿԱԿԱՕ ՖՐԱՑ։

14—20

Դուրս եկաւ մամուլի տակից «Մանկական ձայնագրեալ երգարան» խմբագրութեամբ Եղնիկ քահանայի Երզնկեանց։ Հրատարակութեամբ Ս. Գրիգորեանցի։ Ընդունուած է Ներսիսեան դպրանոցում և թեմական վերատեսչի բարեհաճութեամբ Տփխիսի բոլոր ուսումնարաններում։ Պաճառվում է բացառապէս Ս. Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոցում», գինն է 40 կ., գումարով առնողներին զիջումն կը լինի։

6—10

Ֆ. Կ. ՉԱՄԼԻՆՍԿՈՒ ԴԵՂԱՏԱՆ ԿԻՑ ԻՆԱՅԼՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ Տ. ԿՕՏՐԻՆԻ։ Ամենայն օրը ընդունվում են առաւօտեան 11 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը ներքին, երեխայական, ջղային, վիներական և կաշու հիւանդութիւններ ունեցող հիւանդները։

6—6

Մինչև առաջիկայ 1881 թիւ յունվար ամիսը ՇՈՒՇԻ քաղաքում կը տպագրվի և առանձին գրքով լոյս կը տեսնի ԲԱՖՖԻԻ «ԽԵՆԹԸ» անունով վիպասանութիւնը։ Տպագրութիւնը կը լինի գեղեցիկ և մաքուր թղթի վրա։ Իւրաքանչիւր գրքի գինը կանխապէս բաժանորդ գրվողների համար նշանակվում է 1 ռուբլի։ Իսկ տպագրութիւնից յետոյ գնողների համար գինը կը բարձրանայ։ Պ. պ. բաժանորդները թող բարեհաճեն իրանց վճարը ուղարկել այս հասցէով. Шуша. АВЕЛЬЮ ДАВИДОВИЧУ АПРЕСЯНЦУ. Въ конторѣ АРУНЯНЦА.

Հրատարակիչ ԱԲԵԼ Դ. ԱՊՐԷՍԵԱՆՑ

4—10

ՀՐԱՒԻՐՎՈՒՄ ԵՆ մանկացած Ի. և Ե. Զանջուղազով վաճառականների ՊԱՐՏԱՏԷՐԵՐԸ Թիֆլիսի հահանգական դատարանի դահլիճը հոկտեմբերի 19-ին, առաւօտեան 11 ժամին, ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ համար Զանջուղազովի գործերի մասին ՄՐՑՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ նշանակելու համար։

երդվեալ հոգաբարձ. { Ա. Ստեփանով
Բ. Եակուլով

4—8

ՍՏԱՑՎԱԾ ԵՆ տղամարդկերանց, կանանց և երեխաների ԿԱՍՏՕՐԻ ՇԼԵՊԱՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՐԿՆԵՐ և այլ նորաձև ապրանքներ արտասահմանի նորաձև պահեստի մէջ, որ գտնվում է ԴՎՈՐՑՈՎԱՅԱ փողոցի վրա ՍԱՐԱՋԵՎԻ ԵՒ ԾՕՎԵԱՆՕՎԻ տանը ՎԵՐԻՆ ՅԱՐԿԻ մէջ, Գիրգիզովի վարշավեան ոռնամանների խանութի վերևը։ ՄՈՒՏՔԸ ԲԱԳԻՑ։ Տղամարդկերանց ՇԼԵՊԱՆԵՐ 2 ռ. 55 կ-ից և աւելի թանգ։

Պերոն Գուլասպեանց

4—10

Дозволено цензурою. Тифлисъ, 23 Октября 1880 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.